

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հարություն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. ընդերքօգտագործում, հանքեր, Էկոլոգիա, շրջակա միջավայր

Հայտնի է, որ յուրաքանչյուր երկրի, ինչպես նաև ՀՀ-ի տնտեսական հզորությունը զգալիորեն կանխորոշվում է բնառեսուրսային ներուժից, մասնավորապես հանքահումքային ռեսուրսների առկայությունից: Հայաստանում հայտնաբերված է մոտ 592 հանքավայր, որոնցից արդյունահանվում է ավելի քան 60 տեսակի օգտակար հանածո: Այստեղ իր մասնաբաժինն ունի Լոռու մարզը, որի համար հանքարդյունաբերությունը հանդիսանում է տնտեսական զարգացման առաջատար ճյուղերից մեկը: Հանքերը Լոռիում շահագործվում են հիմնականում բաց եղանակով, ինչը քիչ ծախսատար և տեխնիկատար է: Հանքահումքային ռեսուրսների՝ մետաղների տեսակների ցուցանիշները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 1¹. Հանքահումքային ռեսուրսներում մետաղների տեսակները

Հանքավայրեր	Տարեկան արտադրություն հազ.տ	Մետաղի պարունակություն, %	Մետաղի քանակը, տ
Մաջարան	12500	Mo-0.0455 Cu-0.21	5687 26250
Ագարակ	3200	Mo-0.2169 Cu-0.33	694 10560
Կապան	500	Cu-0.985	4925
Շահումյան	300	Au-3.364 գ/տ Ag-59 գ/տ Cu-0.53 Zn-2.83 Pb-0.26	1.008 18.023 1.725 8490 780
Լիճվազ-Թեյի	150	Au-4.46 գ/տ Ag-28.04 գ/տ Cu-0.34	0.659 4.206 510
Ալավերդի	250	Cu-1.5	3750
Մեղրաձոր	200	Au-8.9գ/տ Ag-12.5 գ/տ	1.76 2.5
Ախթալա	45	Cu-0.47 Pb-1.26 Zn-3.37	211 567 1516
Սոսքի ընդերկ. քարհանք	500 300	Au-5.07գ/տ Au-4.99գ/տ	2.535 1.437

¹ Խ.Մելքոնյան, ՀՀ և ԼՂՀ տնտեսական աշխարհագրություն Եր., 2004, էջ 10-32

Նշենք, որ Հայաստանի ամբողջ տարածքով քարտեզագրված են 100-ից ավելի բազալտի, անդեզիտի հանքավայրեր, որոնցից մի քանիսը իրենց բաղադրությամբ միակն են (օրինակ՝ Խալաջի բազալտի հանքավայրի հանքանյութում MgO-ի պարունակությունը հասնում է մինչև 11%): Հանրապետությունում առկա են նաև բնական հանքային կլանիչների հանքավայրեր՝ բենտոնիտային կավերի, պեռլիտների, դիատոմիտների և ցեոլիտների, որոնցից ստացվող բազմաթիվ վերջնարտադրանքները պահանջում են բարձր տեխնոլոգիաների մշակում և կիրառում: Ոչ մետաղական հանքային ռեսուրսներից ՀՀ-ում տարածված են քարանյութերը (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ՀՀ-ի ոչ մետաղական ռեսուրսներ²

Անվանումը	Տեղաբաշխումը	Քանակը
Տուֆ	Արթիկ, Տուֆաշեն, Հայկաձոր, Ապարան, Ջաջուռ, Ագարակ, Աշտարակ, Թումանյան	2.5 մլրդ ³
Բազալտ	Ախուրյան, Աբովյան, Աշտարակ, Վայք, Թումանյան, Գորիս, Կապան, Գավառ	125 մլրդ ³
Անդեզիտներ	Արզնի, Կապուտան, Մեղրուտի, Վանաձոր, Խնձորեսկ	-
Պեմզա	Աբովյան, Ապարան, Արթիկ, Գորիս, Հրազդան	-
Պեռլիտ	Աբովյան-Հրազդան հանգույց, Արագածի սարալանջ	-
Հրաբխային խարամ	Թալին, Բաղրամյան, Արթիկ, Սիսիան, Գորիս, Գավառ, Վայք	-
Մարմար	Արարատի, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի մարզերը	-
Գրանիտ	Գուգարք, Նոյեմբերյան, Մեղրի, Կապան, Սիսիան, Հրազդան, Թումանյան	30 մլն ³
Բետոնիտներ	Իջևանի Սարիգյուղ, Արտաշատ, Սիսիսան	63 մլն տոննա

Լոռու մարզի լեռնաքիմիական հումքը ներկայացված է՝ հանքային պիգմենտների (հանքային ներկերի), կվարցիտների և Պետրովկայի բարձր կալիումական տուֆերի հանքատեսակներով: Պիգմենտները և կվարցիտները ունեն օգտագործման բավականին լայն ասպարեզ և շուկա, սակայն ներկայումս շահագործվում են աննշան հզորություններով³: Մարզում առկա են նաև տորֆի բազմաթիվ հանքավայրեր և կուտակումներ, որոնք համապատասխան վերամշակումից հետո կարող են ծառայել որպես էկոլոգիապես մաքուր և բարձրորակ պարարտանյութ:

Մարզում արդյունաբերական և բնապահպանական հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են: Հետևաբար, միայն դրանց ներգոր-

² Խ.Մելքոնյան, ՀՀ և ԼՂՀ տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2004, էջ 10-32

³ Մարգարյան Ռ., Մանասյան Ս. Տնտեսական աշխարհագրություն Երևան, 2004թ.

ծության Էկոլոգատնտեսական օրինաչափությունների ուսումնասիրումը, և համալիր ծրագրերի իրականացումը կարող է հանգեցնել մարզի տնտեսական ու բնապահպանական ոլորտների ներդաշնակ զարգացմանը: Մարզի օդային ավազանը աղտոտող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններն են՝ Վանաձորի քիմգործարանը, Ալավերդու պղնձածուլական գործարանը և Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը: Ներկայումս երբ շարքից դուրս են եկել անօրգանական փոշու և վտանգավոր գազերի որսման և չեզոքացման սարքավորումները հրամայական է դառնում սահմանային թույլատրելի մակարդակն չգերազանցող արտանետումների բնապահպանական հսկողությունը:

Հայտնի է, որ Թեղուտի հանքավայրի շահագործումը կտևի ավելի քան 30 տարի, ինչը որոշակիորեն կնպաստի տարածաշրջանում բնապահպանական լուրջ խնդիրների առաջացմանը⁴: Պետք է նշել, որ Էկոլոգիական հետևանքների լիարժեք հսկողության ապահովման տեսանկյունից, անհանգստացնող է հատկապես գնահատման, մեթոդական անորոշությունը, կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդական բացթողումների հետ: Թեղուտի հանքավայրի շահագործման ներկայիս միտումները միանգամայն վկայում են այն մասին, որ նախագիծը ի սկզբանե պետք է ենթարկվեր Ռազմավարական Էկոլոգիական գնահատմանը, այլ ոչ թե դիտվեր, պարզ օբյեկտների բնապահպանական փորձաքննության տեսանկյունից: Այստեղ, միանշանակ, մեծ է հավանականությունը ռիսկային գործոնների ընդլայնման և Էկոլոգիական վտանգի նոր աղբյուրների առաջացման մասով:


Տեղին է անդրադառնալ ՀՀ մարզերում հանքարդյունաբերության զարգացման Էկոլոգիական հետևանքներին, Էկոլոգիական անվտանգության ապահովման խնդիրներին և դրանում ընդհանուր համատեքստում գնահատել Լոռու մարզի դերը և նշանակությունը: Մարզերում հանքարդյունաբերությունը գտնվում է տարբեր Էկոլոգիական վիճակում՝ կախված մարզերի բնական հանածոներով ապահովվածությունից, ընդերքօգտագործման բնապահպանական սահմանափակումներից, տարածքում տնտեսական գործունեության ուղղվածությունից և տեխնոլոգիական նորամուծության աստիճանից: Ըստ տնտեսական գործունեության տեսակների տարբեր են նաև մարզերում ստացված արդյունաբերական արտադրանքի ծավալները: Այսպես, օրինակ, հանքագործական արդյունաբերության և հանքերի շահագործման արտադրանքի ծավալով ՀՀ-ում առաջատար դիրքերում են Սյունիքը, Լոռին և Գեղարքունիքը (Աղյուսակ 3):

⁴Teghut.am- Թեղուտի պաշտպանության քաղաքական նախաձեռնություն

Աղյուսակ 3. ՀՀ մարզերի և քաղաք Երևանի հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արտադրանքների ծավալները 2010-2014թթ.(մլն դրամ)⁵

Տարեթիվ Մարզ	2010	2011	2012	2013	2014
Ք. Երևան	1480.9	1190.3	2153.6	1636.0	1906.5
Արագածոտն	530.7	744.3	615.0	256.4	172.2
Արարատ	1042.8	1076.1	1001.5	869.7	809.4
Արմավիր	-	239.5	187.1	410.1	357.8
Գեղարքունիք	2639.3	6575.3	8929.6	9170.3	8306.8
Լոռի	5704.6	7140.7	9780.4	8760.7	10820.4
Կոտայք	672.5	443.2	1116.8	4514.1	193.5
Շիրակ	106.6	124.1	111.7	101.0	71.6
Սյունիք	132582.9	152147.2	168853.4	169935.3	168343.6
Վայոց Ձոր	207.8	173.7	1230.0	150.7	96.9
Տավուշ	568.7	314.2	454.3	974.0	319.2
Ընդամենը	145536.8	170168.6	193326.4	1967789.3	193142.5

Միաժամանակ, եթե Սյունիքում և Գեղարքունիքում 2012թ.-ից դիտվում է ցուցանիշների որոշակի կայունացում, ապա Լոռիում տեղի է ունենում հակառակը: Այսպես, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ծավալները 2013-2014թթ. կտրուկ աճ են գրանցել՝ 2014 թ.-ին հասնելով 10820.4մլն դրամի (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ Լոռու մարզի հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արտադրանքների ծավալների փոփոխության դինամիկան 2010-2014 թթ. (մլն դրամ)⁶

⁵ՀՀ ԱԿԾ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ» 2011-2015թթ.

Ենթադրվում է, որ 2013-2014թթ. հանքարդյունաբերական ծավալների աճը, կապված է հանքերի էքստենսիվ շահագործման հետ և վկայում է բնատարողության ցուցանիշի աճի մասին: Եթե այդ երևույթն ընդունելի է մարզի տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, ապա Էկոլոգիական հետևանքները/վտանգները կարող են Էապես ազդել Էկոհամակարգերի բնական կայունության վրա: Վերլուծություններից պարզվում է, որ 2015թ.-ն Հայաստանից արտահանվել է 462.36 մլն ԱՄՆ դոլարի հանքահումքային արտադրանք: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է շուրջ 20%-ով: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ այդ տարում հանքահումքային արտադրանքը կազմել է երկրի արտահանման ընդհանուր ծավալի ավելի քան 30%-ը: Նշենք նաև, որ 2014թ. արտահանման կառուցվածքում հանքահումքային արտադրանքի մասնաբաժինը կազմել է 26%: Հայաստանից արտահանվել է 393.82 մլն ԱՄՆ դոլարի հանքահումքային արտադրանք: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշը կրճատվել էր մոտ 3%-ով⁷:

Այսպիսով, ՀՀ ԱՎԾ 2014թ. տվյալների համաձայն՝ հանքարդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը կազմում են ՀՀ ամբողջ արդյունաբերության 15.8 %-ը (198778.9 մլն. դրամ): Բայց հանքարդյունահանման միտումները՝ ծավալների անվերահսկելի աճը և ահագանգող Էկոլոգիական վիճակը, ինչ-որ տեղ դարձրել են հանքարդյունաբերությունը Հայաստանի բնական միջավայրի, «դեգրադացման ուղին»: Խոսքը հանքավայրերի մերձակա հողատարածքների անվերադարձ վատթարացման, մոտակա բնակավայրերի բնակչության առողջությանը հասցված վնասի, ռիսկերի և վտանգների ու այլ բացասական երևույթների մասին: Պարզվում է նաև, որ 2003թ.-ից սկսած օգտակար հանձոների արդյունահանող և երկրաբանական ուսումնասիրություններ կատարող կազմակերպությունների կողմից դիտվում է ընդերքի նոր և նախկինում թերի ուսումնասիրված տեղամասերի երկրաբանահետախուզական աշխատանքների ակտիվացում: Երկրաբանահետախուզական և արդյունահանման ծավալների աճը անխուսափելիորեն բերում է տարածաշրջանի բնապահպանական և Էկոլոգիական հավասարակշռության խախտման:

⁶ՀՀ ԱՎԾ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: ԼՈՌՈՒ ՄԱՐԶ» 2011-2015թթ.

⁷ՀՀ ԱՎԾ «ՀՀ ապրանքաշրջանառությունը» 2015թ.

Հարություն ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ընդերքօգտագործման արդի միտումները ՀՀ-ում

Բանալի բառեր. ընդերքօգտագործում, հանքարդյունաբերություն, էկոլոգիական հիմնախնդիրներ, շրջակա միջավայր

Հոդվածում ներկայացված է Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտի նկարագիրը և բնապահպանության տեսանկյունից առկա հիմնախնդիրները: ՀՀ-ում ընդերքօգտագործման և բնապահպանական հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են: Ընդերքօգտագործման ծավալների աճը անխուսափելիորեն բերում է տարածաշրջանի բնապահպանական և էկոլոգիական հավասարակշռության խախտման: Հետևաբար, դրանց ներցործության էկոլոգատնտեսական օրինաչափությունների ուսումնասիրումը, համալիր ծրագրերի մշակումը և իրականացումը կարող է հանցեցնել երկրում տնտեսական ու բնապահպանական ոլորտների ներդաշնակ զարգացմանը:

Арутюн АРУТЮНЯН

Современные тенденции недриспользования в РА

Ключевые слова: окружающая среда, недриспользование, горная промышленность, природный ресурс, экологические проблемы

В статье представлены описание сферы горной промышленности Республики Армения и проблемы с точки зрения экологии. В РА проблемы недриспользования и экологии тесно взаимосвязаны. Рост объемов недриспользования неизбежно ведет к нарушению экологического равновесия. Следовательно, изучение их экологоэкономического воздействия, разработка и реализация комплексных программ может привести к гармоничному развитию экономических и экологических сфер страны.

Harutyun HARUTYUNYAN

The current mining trends in Republic of Armenia

Key words: environment, mining, mining industry, natural resources, ecological issues

This paper describes the mining industry of Republic of Armenia and the current problems from the perspective of environmental protection. The environmental and mining sector issues in Armenia are strongly interconnected. Intensification of mining inevitably disturbs the regional environmental and ecological balance. Thereby, the analysis of existing ecologo-economic regularities, development and implementation of complex programs may lead to the coherent environmental and economic development.